# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<24>> ---07---2025թ.  N ՄՌ 723-Ն

ք. Արմավիր

## «ՄՐԳԱՇԱՏԻ Վ. ԱՓՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ N1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայկ Մարգարյանի 2025 թվականի հուլիսի 22-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Մրգաշատի Վ. Ափոյանի անվան N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Հայկ Մարգարյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 2025 թվականի օգոստոսի 4-ից 22-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հայկ Մարգարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Մրգաշատի Վ. Ափոյանի անվան N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մրգաշատի Վ. Ափոյանի անվան N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների համակարգող Մարինա Հարությունյանին:
3. 2025 թվականի օգոստոսի 4-ից 22-ը ներառյալ «Մրգաշատի Վ. Ափոյանի անվան N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների համակարգող Մարինա Հարությունյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Հայկ Մարգարյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվական օգոստոսի 25-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,**
**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

2025-07-24 09:12:28 GMT+4
Հավաստված է ԷՍՍԳ-ի կողմից

mID

**Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**